# ՊԱՏԿԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

## Երեքտասաներորդ դար :

### ԺԳ. Պատկեր. ամ տեառն 1200–1299

| | |
|---|---|
| Մխիթար Անեցի : | Պատմութիւն Հայոց, Վրաց, Պարսից և Արաբացւոց : |
| Գրիգոր Սկեւռացի . | Ա. Ներբող ի Ս. Լամբրոնացի* : — Բ. Ճառք ինչ : — Գ. Շարականն Ս. Յովհաննու Մկրտչի «Արեգական արդարութեան» : — Դ. Աղօթք : |
| Մխիթար գրիչ : | Արուեստ գրչութեան : |
| Գէորգ Սկեւռացի : | Մեկնութիւն Եսայեայ : |
| Կոստանդին Ա. կաթողիկոս : | Թուղթք ինչ : |
| Վանական վարդապետ : | Ա. Վարդապետական մանր գրուածք : — Բ. Պատմութիւն Հայոց (անյայտ) : |
| Կիրակոս Պատմիչ : | Պատմութիւն Հայոց : |
| Վարդան վարդապետ : | Ա. Պատմութիւն Հայոց : — Բ. Լուծմունք չորից աւետարանաց դժուարիմաց բանից : — Գ. Մեկնութիւն հինգ գրոցն Մովսիսի : — Գ. Մեկնութիւն Սաղմոսի : — Ե. Մեկնութիւն Երգոց երգոյն Սողոմոնի : — Զ. Մեկնութիւն Դանիէլի : — Է. Տեսութիւն «յԱնթառամ ծաղիկն» : — Ը. Բանք յաղագս ժը ականց, նմանութեամբ ժբ առաքելոց : — Թ. Մեկնութիւն Քերականի, կամ քերականական բանք, ընդ նմին և յաղագս համառօտական արուեստի : — Ժ. Ներբողեան ի Ս. Գրիգոր Լուսաւորիչն : — ԺԱ. Խրատական ճառք և մեկնողական մանր գրուածք : — ԺԲ. Շարականք. Որ նախնեաց. ի յանսահման ծովէն. Որք զարդարեցին. Ամենասուրբ Երրորդութեան : |
| Յովհաննէս Գառնեցի : | Գիրք աղօթից և խրատուց : |
| Յակոբ Կլայեցի : | Շարականն «Երգեցէք որդիք» : |
| Մաղաքիա Աբեղայ : | Պատմութիւն ազգին Նետողաց (այսինքն Թաթարաց) : |
| Յովհաննէս Երզնկացի : | Ա. Շարայարութիւն մեկնութեան Մատթէի յօրինելոյ ի Շնորհալւոյն : — Բ. Կրկին մեկնութիւնք Քերականի : — Գ. Բանք յաղագս երկնային շարժմանց և ոտանաւոր բան ի նոյն : — Դ. Ներբողեան ի Ս. Լուսաւորիչն* : — Ե. Աղօթք : — Զ. Ոտանաւոր մանր գրուածք : |
| Գրիգոր Ե. Անաւարզեցի : | Ա. Կարգաւորութիւն յայսմաւուրաց : — Բ. Թուղթ առ Օշին իշխան : |
| Ստեփաննոս Օրբելեան : | Ա. Պատմութիւն Սիւնեաց : — Բ. Թուղթ առ Գրիգոր Անաւարզեցի : — Գ. Ողբ ի դիմաց Վաղարշապատու : |
| Խաչատուր Կեչառեցի : | Ա. Ողբ բարառնական ի վերայ մեծին Աղեքսանդրի. և այլ գանձք և տաղք : — Բ. Երգն Խորհուրդ Խորին |
| Օշին իշխան : | Թուղթ առ Գրիգոր Անաւարզեցի : |

Յայսմ դարու եղեն Թարգմանութիւնք գրոց ինչ Միխայէլի Ասորւոյ, Յովհաննու Դամասկացւոյ, և Պրոկլի իմաստասիրի :

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ